Դր. Մայքլ Քամբեք
Գլխավոր քարտուղար
Հեռախոս՝ +32 484 75 28 25
Էլ. փոստ՝ michael.kambeck@eufoa.org

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 25 նոյեմբերի, 2010թ.

Հարցում Լեռնային Ղարաբաղում. մարդիկ ցանկանում են հրադադարի ռեժիմի ամրապնդում

Այսօր **«Հայաստանի եվրոպացի բարեկամներ»** կազմակերպությունը (EuFoA, www.EuFoA.org) հրապարակում է *Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում սոցիալ-քաղաքական հարցերի և արտաքին հարաբերությունների շուրջ* միջազգային մակարդակով առաջին անգամ իրականացված *հանրային կարծիքի հարցման* Լեռնային Ղարաբաղի հետազոտության արդյունքները: Ինչպես և Հայաստանում անցկացված հարցումը, այս հետազոտությունը ևս ներառում է հարցեր Լեռնային Ղարաբաղի ներքին իրավիճակի, Թուրքիայի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության, Եվրամիության, ԵԱՀԿ-ի և Հայաստանի հետ առնչություն ունեցող այլ միջազգային կառույցների մասին:

«Մեր տվյալների համաձայն՝ ԼՂ-ի բնակչությունը միանշանակ խաղաղություն է ուզում, բայց, հետևելով պատմական և վերջին իրադարձություններին, նրանք թերահավատորեն են մոտենում միջազգային կազմակերպությունների և ընկերությունների մեծամասնությանը: Մենք համար զարմանալի էր, թե որքան միանշանակ են նրանք կողմնակից հրադադարի ռեժիմի ամրապնդմանը, շփման գծի երկու կողմերից դիպուկահարների հեռացմանը և միջազգային դիտորդների տեղակայմանը: ԼՂ-ի բնակիչները գտնում են, որ սրա միջոցով հնարավոր կլիներ խուսափել զոհերից, նվազեցնել պատերազմի հավանականությունը և դյուրացնել խաղաղության բանակցությունները. նրանք այդ ամենը գնահատում են, ըստ երևույթին, ավելի կարևոր, քան իրենց հնարավոր մտավախությունը իրենց դիպուկահարներին հեռացնելու կամ դիտորդների նկատմամբ անվստահության հետ կապված: Այս տվյալները նշանակում են, որ ԵԱՀԿ-ն և այլ եվրոպական հաստատություններ դեռ շատ անելիք ունեն», – մեկնաբանեց «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության գլխավոր քարտուղար դոկտոր **Մայքլ Քեմբեքը**:

«Այս հետազոտությունն անցկացվել է համաձայն ամենաբարձր չափանիշների ինչպես մեթոդաբանության ու տվյալների հավաքագրման, այնպես էլ որակի վերահսկման տեսանկյուններից: Տվյալներում առկա բազմաթիվ հետաքրքիր եզրակացությունները կարող են քաղաքականապես շահագրգիռ կողմերի միջև շահարկման առարկան դառնալ, սակայն մենք հոսով ենք, որ նման անկողմնակալ հարցումը կարևոր աղբյուր կարող է դառնալ որոշումներ կայացնողների և հասարակության համար թե՛ Հայաստանում, և թե՛ արտերկրում», – հավելեց մեծ բրիտանական «Պոպուլուս» հանրային կարծիքի ուսումնասիրություններով զբաղվող ընկերության գործադիր տնօրեն **Էնդրյու Կուպերը** (www.populus.co.uk):

«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի (IPSC, www.ipsc.am) տնօրեն **Հովհաննես Գրիգորյանը՝** այս հետազոտության հայաստանյան գործընկերը, եզրափակեց՝ ասելով. «ԼՂ-ում իրականացված նմանատիպ առաջին հարցումը բացահայտեց որոշ ուշագրավ սոցիալական տարբերություններ: Ղարաբաղյան հասարակությունը ինտեգրման և համախմբման շատ ավելի բարձր մակարդակ ունի: Հիմնական մտավախությունները կապված են

խաղաղությանն ու անվտանգության հետ, որոնք ավելի գնահատվում են ավելի կարևոր, քան տնտեսական առաջընթացը կամ սոցիալական արդարությունը: Մասնավորապես, ժողովրդավարության մակարդակը ավելի բարձր է գնահատվում, քան Հայաստանում, այն դեպքում, երբ կոռուպցիայի մակարդակն ավելի ցածր է ընկալվում»:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2010 թ. հոկտեմբերի 22-ից 26-ը դեմ առ դեմ կատարված 804 հարցազրույցների միջոցով Ստեփանակերտում և Լեռնային Ղարաբաղի 5 շրջաններում՝ Ասկերանում, Հադրութում, Մարտակերտում, Մարտունիում և Շուշիում: Սահմանային սխալը կազմում է ±3.45%:

Ստորև ներկայացված է հանրային կարծիքի հարցման արդյունքների համառոտ ամփոփումը: Ամբողջական զեկույցը գծապատկերներով այսօրվանից հասանելի է www.EuFoA.org կայքում:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպությունը սիրով կտրամադրի մեկնաբանություններ կամ անհրաժեշտ վերլուծություններ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Եվրոպա-Հայաստան խորհրդի անդամները նույնպես պատրաստակամ են մեկնաբանություններ տրամադրել: Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել մեր քարտուղարություն:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության և Եվրոպա-Հայաստան խորհրդի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել մեր կայք՝ www.EuFoA.org:

Լուսանկարները հասանելի են մեր կայքում, ինչպես նաև կտրամադրվեն ըստ պահանջի: Հեղինակային իրավունքի սահմաններում նկարների օգտագործումը թույլատրվում է: Օգտագործումն անվճար է, «Copyright: www.EuFoA.org» նշելը՝ պարտադիր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Մեթոդաբանություն ու որակի վերահսկում

2010 թ. հոկտեմբերի 22-ից 26-ն իրականացվել է 804 դեմ առ դեմ հարցազրույց՝ ստանալով ճշգրիտ տվյալներ՝ ±3.45% սահմանային սխալով և 95% վստահության գործակցով: Հարցազրույցներն իրականացվել են **Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ Ստեփանակերտում ու Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Շուշիի շրջաններում:** Ընտրանքը բաշխված էր համաչափորեն, որպեսզի արտացոլի Լեռնային Ղարաբաղում բնակչության բաշխվածությունը. հարցազրույցների 40%-ն անցկացվել է Ստեփանակերտում, իսկ 60%-ը՝ նշված շրջաններում: Հարցազրուցավարներն ընտրել են տնային տնտեսությունները պատահական ընտրանքի մեթոդով՝ ընտրության անկողմնակալությունն ապահովելու համար: Հարցազրուցավարներն հարցումներ են անցկացրել պատահականորեն ընտրված տնային տնտեսությունների չափահաս անդամներից նրա հետ, ում ծննդյան օրն ամենամոտն է հարցազրույցի օրվան՝ պատահականություն ու համամասնություն ապահովելու համար: Եթե տվյալ պահին անհնարին է եղել հարցվողի հետ հարցազրույց անցկացնել, կատարվել է 1-ից 3 հետայց՝ հարցազրույցն ավելի ուշ անցկացնելու համար: Եթե հետայցն արդյունք չի տվել, կամ հարցվողն այլ պատճառներով չի կարողացել մասնակցել հարցմանը, նրա փոխարեն հարցումն անցկացվել է նույն ժողովրդագրական տվյալներով (սեռ, տարիք և կրթություն) մեկ այլ հարցվողի հետ:

Լրացված հարցաթերթերն ստուգվել են հարցազրույցների անցկացման բարձր որակ ապահովելու համար: Երթուղու գրանցման տվյալներն ստուգվել են՝ համոզվելու համար, որ հարցազրույցներն ընտրվել են պատահականորեն: Անցկացված հարցազրույցների 15%-ն ուղեկցվել է կոորդիանտորների կողմից, «Այ Փի Էս Սի»-ի կողմից կատարվել են հետզանգեր ընտրանքի 21%-ի չափով՝ ժողովրդագրական մանրամասները ճշտելու և համոզվելու համար, որ հարցազրույցը փաստացի տեղի է ունեցել՝ արձանագրված տվյալներին համապատասխան: Մուտքագրված հարցաթերթերի 100%-ն ստուգվել է: Ընդհանուր առմամբ հերքվել է 4 հարցազրույց:

«Պոպուլուս»-ը պատահականության սկզբունքով ընտրել է հարցազրույցների 10%-ը և զանգահարել՝ հիմնական ժողովրդագրական տեղեկատվությունն ու երկու կարծիք հայցող հարցերը ճշտելու համար: Այս վերստուգման արդյունքում 2 հարցազրույց հերքվել են: «Պոպուլուս»-ը տվյալների ֆայլում մաթեմատիկական լայնածավալ ստուգումներ է իրականացրել՝ պարզելու համար՝ արդյոք եղել է որևէ տրամաբանորեն անհամատեղելի կամ ոչ ճշգրիտ հարցազրույց: Նմանատիպ դեպքեր չեն հայտնաբերվել: Պատահականորեն ընտրված բնօրինակ հարցաթերթերը վերանայվել են «Պոպուլուս»-ի կողմից՝ հաստատելու համար, որ դրանք պրոֆեսիոնալ ու ճշգրիտ կերպով են անցկացվել և գրանցվել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ներքին իրավիճակը

Լեռնային Ղարաբաղի բնակիչները նույնիսկ ավելի դրական են վերաբերվում իրենց երկրի ընթացքին, քան հայաստանաբնակները, և նրանք մեծապես աջակցում են նախագահ Բակո Սահակյանին: Լեռնային Ղարաբաղի ժողովրդի 80%-ի կարծիքով իրենց երկրի զարգացումն ընթանում է ճիշտ ուղղությամբ՝ ի համեմատություն արդեն իսկ բարձր արդյունք ցուցաբերած 50% հայաստանաբնակների, որոնք նույն կարծիքին են Հայաստանի մասին: Թեև սա չի գնահատում երջանկության մակարդակը, այն հստակորեն առաջընթացի զգացողություն է արտահայտում:

Լեռնային Ղարաբաղի բնակիչները նկատում են բոլոր ոլորտներում տեղի ունեցող առաջընթացը: Նրանք կարծում են, որ կյանքի ընդհանուր որակը վերջին հինգ տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է (հարցին՝ որքանով է ԼՂ-ն զարգացել վերջին հինգ տարիների ընթացքում, մարդիկ կյանքի ընդհանուր որակը գնահատել են 6.46՝ 1-10 միավորներով սանդղակով): ԼՂ-ի բանակիչները գտնում են, որ ամենամեծ բարելավումները տեղի են ունեցել անվտանգության (7.19), կրթության (7.15) և ենթակառուցվածքային (7.14) ոլորտներում, սակայն դրական վերաբերմունքը տնտեսության նկատմամբ ավելի ցածր է (6.13), և մարդիկ շատ ավելի պակաս դրական են վերաբերվում կոռուպցիայի դեմ պայքարի առաջընթացին (5.66): ԼՂ-ի

բնակչությունը կարծում է, որ վերջին հինգ տարիներում Հայաստանը բոլոր ոլորտներում ավելի է զարգացել, քան ԼՂ-ն և շատ ավելի, քան իրենք՝ հայաստանաբնակները: Հետաքրքրական է, որ Հայաստանի բնակչությունը կարծում է՝ Լեռնային Ղարաբաղն ավելի է զարգացել, քան Հայաստանը, այսպիսով՝ յուրաքանչյուրն ավելի շատ առաջընթաց է տեսնում դիմացինի երկրում:

Իրենց երկրի առաջընթացի նկատմամբ նման լավատեսությամբ՝ ԼՂ-ի բնակիչներից գրեթե յուրաքանչյուր երկրորդը (44%) կարծում է, որ Կառավարությունն իրենց լավ (35%) կամ շատ լավ (9%) է ներկայացնում: Սա շատ ավելի մեծ ցուցանիշ է, քան հայաստանաբնակների 14%-ը, որոնք նույն կարծիքին են իրենց Կառավարության մասին: Ինչպես և Հայաստանի բնակչությունը, Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ավելի կողմնակից է իր նախագահին, քան այլ հնարավոր նախագահական թեկնածուներին: ԼՂ-ի բնակիչների կեսից ավելին (52%) նախագահական ընտրություններին առաջին հերթին կողմնակից կլինեին Բակո Սահակյանին, մինչդեռ թվում է, թե Սերժ Սարգսյանը Հայաստանում գործում է այլ քաղաքական միջավայրում, քանի որ 27% ցուցանիշով նրա կողմնակիցների թիվը գերազանցում է մյուս բոլոր թեկնածուների համատեղ ցուցանիշին, բայց 38%-ը նշում է, որ «ոչ ոքի ձայն չի տա» կամ «դժվարանում է նշել, թե ում կողմնակիցն է»: Նախագահ Սահակյանի կողմնակիցների թիվն ավելի քան տասն անգամ գերազանցում է հաջորդ առավել ուժեղ հնարավոր թեկնածու Աշոտ Ղուլյանի կողմնակիցների թվին (5%) և հավասարապես բաշխված է տղամարդկանց ու կանանց և բոլոր տարիքային խմբերի միջև: Նույնիսկ այն մարդկանց մեկ երրորդը, որոնք կարծում են, թե երկրի զարգացումն ընթանում է սխալ ուղղությամբ, կողմնակից են նախագահին:

Նախագահը շատ ավելի կողմնակիցներ ունի, քան ԼՂ-ի ցանկացած կուսակցություն: «Ազատ Հայրենիք» կուսակցության կողմնակիցները կազմում են 21%՝ չնչին չափով գերազանցելով Արցախի դեմոկրատական կուսակցությանը (20%) և մի փոքր ավելին գերազանցելով Հայ հեղափոխական դաշնակցությանը (17%): Այնուամենայնիվ, թեև այս երեք կուսակցությունների կողմնակիցներն ամենաշատն են, մարդկանց մեկ երրորդից ավելինը ասում է, որ չգիտի, թե որ կուսակցության օգտին կքվեարկեր կամ որ ընդհանրապես ոչ մի կուսակցության օգտին չէր քվեարկի (ընդհանուր այսպես է ասել մարդկանց 36%-ը):

Ինչպես և Հայաստանում, Լեռնային Ղարաբաղի բնակչության համար ևս հեռուստատեսությունը հանդիսանում է սոցիալ-քաղաքական և տնտեսական հարցերի մասին տեղեկանալու հիմնական աղբյուր: Ակնհայտ է, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակիչների՝ միմյանց երկրների քաղաքական և տնտեսական զարգացվածության առնչությամբ ունեցած հետաքրքրության աստիճանի տարբերությունը: ԼՂ-ի բնակչությունը շատ ավելի հետաքրքրված է իր երկրի սոցիալ-քաղաքական կյանքով, քան Հայաստանի բնակչությունը՝ Հայաստանով: Հետաքրքրական է, որ ԼՂ-ի բնակիչները նույնիսկ ավելի հետաքրքրված են Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքով, քան իրենք՝ հայաստանաբնակները: Նաև ԼՂ-ում հետաքրքրությունն ավելի լայնորեն է բաշխված բոլոր տարիքային խմբերի և կրթական մակարդակների միջև, մինչդեռ Հայաստանում երիտասարդներն ու ավելի ցածր կրթությամբ մարդիկ առավել քիչ հետաքրքրություն են ցուցաբերում:

Թուրքիա

Ինչպես և Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում ևս մարդիկ թերահավատորեն են մոտենում Թուրքիայի՝ խաղաղություն հաստատելու շահագրգիռ լինելուն վերջին 12 ամիսների ընթացքում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին առնչվող իրադարձություններից հետո: Նրանց ճնշող մեծամասնությունը (84%-ը 11%-ի հարաբերակցությամբ) հավանություն է տալիս Հայաստանի նախագահի որոշմանը՝ սառեցնել հայ-թուրքական հարաբերություններն այն բանից հետո, երբ Թուրքիան չվավերացրեց արձանագրությունները: Ինչպես և Հայաստանում, շատերը կարծում են, որ առհասարակ շատ դժվար է ավարտին հասցնել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը, և այդ զգացողությունը պայմանավորված է Թուրքիայի՝ արձանագրությունները վավերացնելու դժվարություններով: ԼՂ-ի բնակչության ճնշող մեծամասնությունը կարծում է, որ արձանագրությունների վավերացման ընթացքում ծագած Թուրքիայի դժվարությունները պարզապես պատրվակ էին դա չանելու համար (7.91՝ 1-10 միավորներով սանդղակով), և շատերը, ինչպես և Հայաստանում, նշում են, որ իրենք «միշտ էլ գիտեին», որ Թուրքիան երբեք ավարտին չի հասցնի հարաբերությունների կարգավորման գործընթացը (8.4): Նույնիսկ Թուրքիայում զինված ուժերի դերի կրճատման և այլ ժողովրդավարական ձեռքբերումների մասին նշելուց հետո նրանք խորապես կարծում են, որ վերջին հինգ տարիների ընթացքում Թուրքիան չի վերածվել ավելի հուսալի հարևանի (2.17), կամ որ ավելի բարեկամական քաղաքականություն է ցուցաբերում, քան հինգ տարի առաջ (3.72):

Այնուամենայնիվ, ԼՂ-ի բնակիչներն իսկապես գիտակցում են, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն իրապես շահավետ կլինի: Նրանք խորապես համոզված են, որ Հայաստանի տնտեսությունը

կշահի միջազգային առևտրից (80%), և մեծամասնությունը կարծում է, որ այն Հայաստանն ավելի կմոտեցնի Եվրոպային (61%) և ավելի մեծ հնարավորություններ կտա Հայաստանի արտաքին քաղաքականության համար (54%): Ինչպես և Հայաստանում, այնուամենայնիվ, ԼՂ-ի բնակիչները ևս բավականին կասկածանքով են վերաբերվում այն փաստին, որ Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության ընդունումն ավելի հավանական կդառնա, կամ որ Թուրքիան կդառնա ավելի լավ տարածաշրջանային դերակատար: Մարդկանց մեծամասնությունը նաև կարծում է, որ դա կհանգեցնի թրաֆիքինգի աճի ու արտագաղթի տարածմանը և որ Հայաստանի սեփականությունը Թուրքիայի ձեռքն ընկնելու խնդիր կծագի:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում

Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ավելի իրազեկված է հակամարտության կարգավորման ներկայիս իրավիճակի մասին, քան Հայաստանի բնակչությունը (68%-ը 50%-ի համեմատությամբ), բայց նրանք համակարծիք են հակամարտության խաղաղ կարգավորման հնարավոր բաղադրիչների առնչությամբ: ԼՂ-ի բնակիչները բավականին դրական են վերաբերվում այն միջոցներին, որոնք կնպաստեն Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի սերտորեն կապված լինելուն, կտրականապես դեմ են այն միջոցներին, որոնց արդյունքում զիջում կարվի Ադրբեջանին, և մասամբ դրական են վերաբերվում այն միջոցներին, որոնք իրենց կարծիքով կնպաստեն խաղաղության հաստատմանը՝ առանց վնասելու Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի կապված լինելուն:

ԼՂ-ի բնակչությունը մեծապես դրական է վերաբերվում երկու երկրները կապող միջանցքին (8.5՝ 1-10 միավորներով սանդղակով), մինչդեռ «միջանցք» տերմինը, ընդհանուր առմամբ, մեկնաբանվում է ավելի լայն իմաստով: Նրանք նաև դրական են վերաբերվում Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշմանը՝ իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով, որպես խաղաղության համապարփակ գործարքին ձեռնամուխ լինելու վերջնական քայլ (6.75՝ 1-10 միավորներով սանդղակով): Հետաքրքրական է, ինչպես և Հայաստանում, ԼՂ-ի բնակչությունը դրական է վերաբերվում հրադադարի ամրապնդման միջոցով դիպուկահարների հեռացմանը և շփման գծի երկայնքով միջազգային դիտորդների տեղակայմանը (6.35՝ 1-10 միավորներով սանդղակով), թեև սեփական դիպուկահարների հեռացումը միջազգային դիտորդներին վստահելը պետք է որ դիտվեին ռիսկային անվտանգության տեսանկյունից: Մարդիկ խորապես համոզված են, որ եթե լիներ հրադադարի ամրապնդում, զոհերի թիվը կնվազեցներ (67%), կհեշտացներ ԵԱՀԿ-ի համար խաղաղ բանակցություններ վարելու գործընթացը (64%) և կնվազեցներ պատերազմի բռնկման ռիսկերը (60%): ԼՂ-ի բնակչության կեսը նաև գտնում է, որ ավելի հեշտ կլիներ, եթե հակամարտող կողմերի միջև վստահության ձևավորման միջոցներ կիրառվեին:

Այնուամենայնիվ, ԼՂ-ի բնակչության մեծամասնությունը դեմ է այն միջոցներին, որոնք մեծ զիջումներ են ենթադրում Ադրբեջանին՝ հատկապես Լեռնային Ղարաբաղի շրջակա տարածքների հսկողությունը Ադրբեջանին հանձնելը (1.1՝ 1-10 միավորներով սանդղակով), նույնիսկ եթե Ադրբեջանի ռազմական գործողություններն արգելված լինեն և դա լինի խաղաղության հաստատման համապարփակ գործողությունների մաս (1.2՝ 1-10 միավորներով սանդղակով):

Առկա է խաղաղ կարգավորման բանակցությունների երեք հնարավոր բաղադրիչ, որոնց նկատմամբ ԼՂ-ի բնակիչների վերաբերմունքն ավելի քիչ դրական է, քան հայաստանաբնակներինը: Նրանք շատ ավելի կտրականապես են դեմ (1.78՝ ԼՂ-ում, 3.73՝ ՀՀ-ում) ներքին տեղահանված անձանց և փախստականների իրավունքին՝ վերադառնալ նախկին բնակության վայր, մեծամասամբ ԼՂՀ շրջակա տարածքներ (վերականգնելով 1989թ.-ի ԽՍՀՄ մարդահամարի պատկերը): Նրանք նաև այդքան էլ դրական չեն վերաբերվում միջազգային անվտանգության ապահովման երաշխիքներին, այդ թվում, խաղաղապահ գործողությանը՝ որպես խաղաղության համապարփակ գործունեությանը ձեռնամուխ լինելու մաս (5.44՝ ՀՀ-ում և 6.43՝ ԼՂ-ում հարաբերակցությամբ), վստահություն ներշնչելու միջոցների կիրառմանը խաղաղության հաստատման բանակցություններում ավելի լավ հիմք ունենալու նպատակով (5.58՝ ՀՀ-ում և 6.47՝ ԼՂ-ում հարաբերակցությամբ) և միջանկյալ կարգավիճակ Լեռնային Ղարաբաղի համար անվտանգության երաշխիքների ու ինքնակառավարման ապահովման՝ որպես խաղաղության հաստատման համապարփակ գործողությունների մի մաս (4.23՝ ՀՀ-ում և 5.62՝ ԼՂ-ում հարաբերակցությամբ):

ԵԱՀԿ Մինսկի խումբ

ԼՂ-ի բնակչությունը ավելի տեղեկացված է ԵԱՀԿ Մինսկի խմբի մասին, քան Հայաստանի բնակչությունը, բայց նրանց պատկերացումները նրա դերի և գործունեության մասին ավելի բացասական են: ԼՂ-ի բնակչության կեսը (51%) ասում է, որ տեղեկացված է ԵԱՀԿ Մինսկի խմբի նպատակներից և գործունեությունից: Հայաստանում այդպես է նշել հարցվողների 38%-ը: ԼՂ-ի բնակչության քարորդից էլ

պակասն է նշում, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը մեկն է այն կազմակերպություններից, որոնց նրանք վստահում են՝ նշանակալիորեն ավելի ցածր տոկոս, քան Հայաստանում (38%): ԼՂ-ի բնակչության միայն մեկ քառորդն է պնդում, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին մեծապես աջակցող կազմակերպություններից մեկն է:

ԼՂ հարցվողների 43%-ն է նշում, որ ԵԱՀԿ Մինսկի Խումբը դեր ունի հակամարտության հաղթահարման գործում, քիչ ավելին, քան Հայաստանի հարցվողները: Չնայած այն բանի, որ Մինսկի Խմբի առաքելությունը հենց խաղաղության հաստատումն է, ԼՂ հարցվողների միայն մեկ երրորդն է կարծում, որ այն իրականում դրանում շահագրգռված է:

Ինչպես և Հայաստանում, Ռուսաստանը ծայրաստիճան դրական է ընկալվում է ԼՂ-ում, ինչը նորից կարող է պայմանավորված լինել ՌԴ նախագահ Մեդվեդևի՝ վերջերս Հայաստան կատարած պետական այցով: Վստահության (85%), ԼՂ-ին և ՀՀ-ին աջակցության (78%), հակամարտության կարգավորման գործում մեծ դերի (87%) և խաղաղության հաստատման մեջ շահագրգռվածության (80%) տեսանկյունից ՌԴ ցուցանիշները ավելի բարձր են քան հաջորդ երկիրը կամ կազմակերպությունը (Ֆրանսիա 32%, 40%, 46% և 32% համապատասխանաբար): Այս պատասխանները նման են Հայաստանում ստացված արդյունքներին, մի տարբերությամբ՝ ԼՂ բնակչությունը 16%-ով ավելի մեծ դեր է տալիս ՌԴ-ին՝ հակամարտության կարգավորման առումով:

ԵՄ

Եվրամիության հեղինակությունը Լեռնային Ղարաբաղում նույնիսկ ավելի ցածր է, քան ԵԱՀԿ-ինը: Միայն հարցվողների 16%-ն է նշում, որ դա իրենց կողմից առավել վստահելի կազմակերպությունն է և միայն 14-ն դիտում այն որպես Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին առավել աջակցող: Ինչպես և Հայաստանում, Ղարաբաղում հարցվողների միայն հինգերորդ մասն է կարծում, որ ԵՄ դեր ունի կոնֆլիկտի կարգավորման գործում, և միայն 10%-ը՝ ավելի պակաս քան Հայաստանում, կարծում է, որ դա այն կազմակերպությունն է, որը շահագրգռված է խաղաղության հաստատման մեջ:

Չնայած ԼՂ բնակիչների մեծ մասը չեն կարևորում ԵՄ դերը հակամարտության հաղթահարման առումով, նրանք, ինչպես և հայաստանաբնակ հարցվողները, այնուամենայնիվ, դրական են արձագանքում մի շարք հնարավոր միջոցառումներին, նշելով, որ ԵՄ իրականում կարող է դերակատարություն ունենալ: ԵՄ հնարավոր քայլերից հատկապես մեծ աջակցություն են վայելում մշտական ոչ-ռազմական ԵՄ դիտորդական առաքելության գործուղումը տարածաշրջան՝ «չկանխատեսված» պատերազմից խուսափելու համար և հակամարտության խաղաղ կարգավորման համար ԵՄ պարտավորությունների ավելացումը՝ հակամարտության գոտում ժողովրդավարության ամրապնդման համար: Հարցվողները նաև դրական են վերաբերում Հայաստանի և Ադրբեջանի միջև հրադադարի ռեժիմի ամրապնդման համաձայնության գալուն ուղղված ԵՄ հնարավոր գործողությունների նկատմամբ: Ինչպես և Հայաստանում, ԼՂ հարցվողները նույնպես կտրականապես դեմ են ԵՄ օժանդակության դադարեցմանը ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից բանակցություններին և այն ԵՄ-ի նոր ձևաչափով փոխարինմանը:

Այն հարցին, թե որն է իրենց առավել նախընտրած արժեքային համակարգը՝ ռուսականը, եվրոպականը թե ասիականը, Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ավելի շատ դեպքերում (47%), քան Հայաստանի հարցվողները (25%) նշել է, որ իրենց նախընտրած արժեհամակարգը հայկականն է, չնայած որ այդպիսի տարբերակ նրանց չի առաջարկվել: ԼՂ հարցվողները ավելի քիչ են կողմնորոշված դեպի ռուսական արժեքային համակարգը, քան հայաստանաբնակները (32% և 45% համապատասխանաբար: Ինչպես և Հայաստանում, գրեթե ոչ ոք չի ցանկանում, որ իր երկիրը մոտ լինի ասիական արժեքներին:

Ինչպես և Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում նույնպես ԵՄ-ի և Հայաստանի միջև գործընկերության նոր և համակողմանի համաձայնագրի առավել կարևոր նպատակներ են համարվում Ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության առավել բարենպաստ պայմանների ստեղծումը (առավել կարևորը 7 նպատակներից). Ի հակադրություն դրան, ԵՄ մուտքի արտոնագրի (վիզայի) տրամադրման հեշտացումը, ինչը ենթադրաբար պետք է որ ավելի կարևոր թվար ԼՂ բնակիչների համար, իրականում նշվում է որպես ամենաքիչ կարևորը (առավել քիչ նշված երեք նպատակներից է):